ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» մայիսի 2020 թվականի N 06-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ, 5-րդ, 6.1-րդ և 7-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի օգոստոսի 8-ի N 1000-Ն որոշման հավելված N 2-ի 19-րդ կետով, Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհրդի 2019 թվականի օգոստոսի 29-ի N 04 որոշման հավելվածի 19-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհուրդը ***որոշում է՝***

1. Հավանություն տալ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2020 թվականի տարեկան գործունեության ծրագրով նախատեսված աշխատանքների կատարման մասին 1-ին եռամսյակի հաշվետվությանը:
2. Ընդունել ի գիտություն Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի որակի ապահովման վարչության 2020 թվականի 1-ին եռամսյակի հաշվետվությունը և Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավար Հակոբ Ավագյանին՝ ապահովել ներկայացված հաշվետվությամբ առաջարկությունների կատարումը:

3. Հաստատել Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի 2020 թվականի I-ին եռամսյակի գործունեության կատարողականի գնահատումը:
4. Հաստատել Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից իրականացվող ստուգումների ուղեցույցը:
5. Հավանություն տալ Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի հաստիքացուցակին:
6. Երկարաձգել Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կառավարման խորհուրդի անդամների՝ Հ. Պողոսյանի, Շ. Դանիելյանի և Վ. Պետրոսյանի անդամությունը:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ԹՈՐՈՍՅԱՆ

Recoverable Signature

X

ԱՐՍԵՆ ԹՈՐՈՍՅԱՆ

Signed by: TOROSYAN ARSEN 3114920360